«Հավատ պետք է ներշնչենք»

Երեկ դեռ մայրամուտից առաջ արևի ներքո այնքան պայծառ էին աշնան գույները, այնպես զառ-վառ՝ ծառերի հանդերձը: Տեղատարափ մի անձրև անհա, և նույն ժպտերես տերևները մեկեն կուչ եկան ու խոնարհվեցին՝ ընկնելու պատրաստ: Ավելի «անհամբերներն» արդեն ասֆալտին են, ու ափսոսում ես տրորել: Կոմերիտմիության Կենտկոմ գալու նպատակն այս անգամ գաղափարախոսության գծով քարտուղարի հետ զրուցելն է: ԵՐԳԵՆԻ ՊՈՒՇԿԻՆԻ հետ ծանոթացել էի մեկ օր առաջ: Եվ նրա գործնական խոսքը, բոլորի հետ հարգալից, մտերմիկ վերաբերմունքը, մտազբաղ հայացքը ներշնչել էին, որ անկեղծ է լինելու մեր զրույցը:

Այո, ամեն ինչ սպասվածի պես էր՝ քարտուղարը սիրով համաձայն է պատասխանել հարցերիս, միայն թե կուսակցության Կենտկոմ է շտապում՝ խորհրդակցության: Պայմանավորվում ենք՝ մի քանի ժամից: Կրկին՝ գործեր, զանգեր, այցելուներ: Այդպես է բոլորի հոգսը բաժանել փորձող կազմակերպչի առօրյան: Ու վերջապես որոշում ենք սկսել զրույցը, որն այնքան հաճախ ընդհատվում էր տարբեր պատճառներով...

«ԱՎԱՆԳԱՐԴԻ» ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՄՈԼԴԱՎԻԱՅԻ ԿՈՄԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

—ՀԱՄԼԿԵՄ բանի՞ անդամ ունի Մոլդավիայի հանրապետական կոմերիտական կազմակերպությունը, և հիմնական ի՞նչ հարցեր են դրված այսօր նրա առջև:

—471 հազար երիտասարդներ են անդամագրված մեր կազմակերպությանը: Մեր հիմնահարցերը երիտասարդության շահերն ու հետաքրքրությունները պաշտպանելն է: Անում ենք ամեն ինչ, որպեսզի հասնենք նրանց նաև կառավարմանը մասնակից դարձնելուն: Ամենաառաջնահերթ խնդիրը, թերևս, կազմակերպության կառուցվածքի դեմոկրատացումն է, որն հնարավորություն կտա ավելի լայն հասարակական գործունեություն ծավալել: Մենք կողմնակից ենք այն սկզբունքին, որ երիտասարդն ինքը վճռի սեփական պրոբլեմները, ինքն ընտրի իր նախասիրությունները և ոչ թե պարտադրաբար ընդունի մեր առաջարկածը: Այս ամենն արտահայտված են փետրվար ամսին կայացած ԼԿԵՄ Կենտկոմի 6-րդ պլենումի ընդունած ծրագրային որոշումներում:

—Իրոք, դեմոկրատական ընկալումներ է՝ ընտիր ինքդ, իսկ մենք կաջակցենք, հարկ եղած դեպքում՝ կկողմնորոշենք հետագայի համար. այո՞:

— Այո, իմ կարծիքով, մենք առաջադիմական կոնցեպցիա ենք ընդունել. այնպիսի պայմաններ ստեղծել, որպեսզի երիտասարդն ունենա ընտրության մեծ հնարավորություններ՝ ինչով զբաղվի, ինչ հետաքրքրություններ ունենա: Ավելի պարզ եթե ձևակերպենք, նրան չենք պարտավորվում ասել նախկինի նման՝ սա է լավը, պետք է ընդունենք, այս գաղափարին պետք է հետևենք, գեղեցիկի միակ չափանիշն այս է՝ զմայլվիր:

Մյուս կոնցեպցիան, եթե փորձենք բանաձևել, հետևյալն է՝ ոչ թե գաղափարից՝ սուբյեկտը, այլ՝ բնհակառակը: Այսինքն, գաղափարը պետք է առաջանա անհատից, խմբերից: Այլապես, ինչի է նման. ձևակերպվում է այս կամ այն գաղափարը, և, անկախ նախասիրություններից, յուրաքանչյուրը պարտավոր է դրա կրողը դառնալ: Դա վանող է:

Մեր երրորդ կոնցեպցիան ազգային համախմբվածությունն է: Դուք էլ արդեն որոշակիորեն գիտեք, թե ինչպիսի բարդություններ կան ազգային խնդրում:

Պատահականորեն և հավուր պատշաճի չէր, որ ստեղծեցինք հանրապետական երիտասարդական ներկայացուցչական ժողովը (ֆորում), դրա մասին ևս գիտեք...

—Այո, եվզենի: Այդ ժողովի մասին մանրամասնորեն կխոսվի այլ հոդվածում, ուստի խնդրում եմ առանձնապես չծավալվել դրա շուրջ:

—Բարի, բայց ուզում եմ շեշտել, որ հանձին այդ ֆորումի, մենք ստեղծել ենք մեր՝ երիտասարդության պառլամենտը, որն համախմբում է ամենատարբեր հայացքներ ունեցող խմբավորումների ներկայացուցիչների: Նույն՝ «կլոր սեղանի» շուրջ, հավասար իրավունքներով, վեճեր են լինում, կարծիքներ բախվում: Յուրաքանչյուրն ունի վետոյի իրավունք: Նման բախումներից է ծնվում ճշմարտությունը: Նաև հաշտության եզրեր են որոնվում, միմյանց հանդուրժելու, իրար ճիշտ հասկանալու հնարավորություն է ստեղծվում: Եվ մեր խորին համոզմամբ ժամանակն է նման կազմակերպություն ստեղծել և հանրապետության Գերագույն խորհրդին կից:

—Երիտասարդական մամուլը, հանրապետության համար դժվարին օրերին, կարողացա՞վ կատարել կոլեկտիվ կազմակերպչի իր դերը:

—Թող տարօրինակ չթվա, բայց որոշ իմաստով այն ավելի սրում էր վիճակը: Ռուսերեն լեզվով տպագրվող թերթերն այլ դիրքորոշում ունեին, ազգային լեզվով հրատարակությունները՝ ուրիշ: Ջանում էինք հետևել, որպեսզի օբյեկտիվ լինեն երկուսն էլ:

Եվ ոչ միայն թերթերը Գործադուլների օրերին, երբ մենք կուսակցությանն ու կառավարությանը աջակից, ձգտում էինք մարդկանց իրենց աշխատավայրերը վերադարձնել, կոմերիտմիության որոշ քաղկոմ-շրջկոմներ հենց իրենք էին մասնակցում գործադուլին: Մինչ մենք դատապարտում էինք այդ երևույթը, նրանք հովանավորում էին: Գագաուզները, օրինակ, պայքարի մերժելի այդ ձևով ինքնավարություն էին պահանջում, ուրիշները՝ պետական լեզուն միայն մոլդավերենը ճանաչելու դեմ էին դուրս գալիս: Այնպես որ, հիմա արդեն միշտ չէ, որ Կենտկոմի բյուրոյի, քարտուղարության դիրքորոշումը համընկնում է քաղկոմ-շրջկոմների դիրքորոշմանը:

Նույնիսկ Կենտկոմի ապարատում տարբեր վերաբերմունք ունեն այս կամ այն հարցի նկատմամբ: Թեկուզ, ասենք, սեպտեմբերի 13-ին հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանում վավերացված որոշումը՝ լատինատառ այբուբենին անցնելու վերաբերյալ. մեկը սիրով ընդունեց, մյուսները՝ սրերով:

—Դա, իհարկե, հուսահատեցնող չէ:

—Բոլորովին: Նույնիսկ ոմանք կոչ էին անում դուրս գալ ՀԱՄԼԿԵՄ -ից, քանի որ հանրապետության ԼԿԵՄ Կենտկոմն իրենց հետ չէ: Նաև լրատվության պակասը նպաստեց իրավիճակի սրմանը: Կենտրոնական մամուլն էլ չխորացավ փաստերի մեջ, բավարարվելով դրանց միակողմանի մեկնաբանությամբ:

Այդ ամենը մեզ պարտավորեցրեց աշխատանքի նոր ձևեր որոնել, առավել բազմաշերտ կազմակերպել աշխատանքները:

—Նկատելիորեն մեծացել է երիտասարդների ակտիվությունը: Եվ, իհարկե, ոչ միայն Մոլդավիայում: Ինչպե՞ս եք գնահատում այդ ակտիվությունը: Բացասական տարրեր և՞ս ունի այն:

— Բացասականը միայն չափազանցություններն են, որ նկատվում է երբեմն և որը սառը դատողությունից դրկում է մարդկանց: Իսկ ակտիվությունն անհամեմատ աճել է վերջին տարիներին: Դրա լավագույն վկայությունը ոչ պաշտոնական խմբերի գոյությունն է: Ավաղ, սակայն, որքան էլ ինքնատիպ ու բազմապլան է այդ ակտիվությունը, մենք՝ պաշտոնական կառուցվածքը, պատրաստ չէինք դրան: Այդ անպատրաստ լինելը նույնպես, իր հերթին, հանգեցրեց ոչ պաշտոնականների կազմավորմանը: Նրանց հետ, ի դեպ, արդեն գիտեք, մենք աշխատում ենք, համագործակցում: Եվ՝ ոչ միայն հանրապետական երիտասարդական ֆորումի շրջանակներում: Փորձում ենք նրանց ներքաշել կոմերիտական աշխատանքներում, եթե իհարկե, իրենց պահանջներով ու սկզբունքներով դրանք չեն հակասում ՀԱՄԼԿԵՄ կանոնադրությանը: Օրինակ, ժողովրդական ճակատը ցանկություն հայտնեց վերականգնել Շտեֆան Չելմարեի հուշարձանը, կօգնենք, կաժանդակենք: Մեկ այլ խմբավորում դիսկոտեկ էր ցանկանում բացել՝ մեր օգնությամբ այն արդեն գործում է շրջաններից մեկում:

— Ինչպիսի՞ հեղինակություն ունի հանրապետության կոմերիտական կազմակերպությունը: Այսօր ամենատարբեր ամբիոններից հաճախ է նշվում, որ կոմերիտմիությունը կորցրել է իր հեղինակությունը:

—Ամեն ինչ վարդագույն չէ, իհարկե: Նախ՝ բոլոր հարցերում չէ, որ կարողանում ենք օգտակար լինել երիտասարդությանը: Փաստորեն կոմերիտմիությունը պատասխանատու է ամեն ինչի համար, բայց հնարավորությունները քիչ են: Քանի որ խոսեցինք հնարավորություններից, ասեմ, որ ֆինանսապես շուտով կբարելավվի մեր վիճակը. որոշել ենք Կենտկոմին կից արտադրական ձեռնարկություններ ստեղծել: Առաջիկայում կգործի կոմերիտմիության կենտկոմին կից հրատարակչություն, աշխատանքներ են տարվում հեռուստաստուդիայում տնտեսաշվարկային հիմունքներով երիտասարդական տեսաալիք ստեղծելու ուղղությամբ: Այսինքն՝ մեր նպատակն է ունենալ դրամ, ինչպես ասում են՝ երիտասարդական քաղաքականության հաշվառ: Այն մենք կօգտագործենք կոմպյուտերներ ձեռք բերելու, երիտասարդական բնակելիների շինարարության, կենցաղսպասարկման նպատակներով և այլն:

Ինչն է կարևորը. երիտասարդական կազմակերպությունը պետք է ունենա իր կոնկրետ խնդիրները, գործելու կոնկրետ ուղղությունները: Նվազում է ՀԱՄԼԿԵՄ շարքերը ընդունվողների քանակը. չեմ ուզում թաքցնել: Երևի մեզանից սպասելիքները քիչ են: Հավատ պետք է ներշնչենք: Վերջերս կազմակերպության հեղինակությունն ամրապնդվել է՝ շնորհիվ ոչ պաշտոնականների հետ համագործակցության: Նախկինում մենք ավելի շատ լռում էինք. թվում էր լուռենք մեր դիրքորոշումը: Հիմա ամեն կազմավորման առաջարկներին համաձայնում ենք մեր այլընտրանքը: Այս օրերին մեր հիմնական խնդիրը Գերագույն խորհրդի ընտրություններում հաջող քննություն բռնելն է. մեր ներկայացուցիչները պետք է լինեն խորհուրդներում: Այդ ուղղությամբ մեծ աշխատանքներ ենք ծավալել, քաղկոմ—շրջկոմներում ընտրությունների շտաբներ հիմնել: Շատ ենք մտածում կոմերիտական կազմակերպության կառուցվածքի, նրա խնդիրների մասին: Ի վերջո, ինչո՞ւ չէ, երիտասարդական պառլամենտ է պետք: Սոսկ ձևականորեն չի ասված՝ երիտասարդությունը մեր վաղվա օրն է, գալիքը:

— Իսկ իբրև մաղթա՞նք՝ ոչ միայն մոլդավացի երիտասարդներին:

—Ցանկություններս շատ են: Բայց և այսօր ամենուր արթնացել է ազգային ինքնագիտակցությունը. բոլոր հանրապետություններում և բոլոր ազգերի մոտ: Դա գնահատելի է: Միայն թե թող չմոռացվի ոչ մի պահ, որ նման պարագայում քիչ չեն քաղաքական արկածախնդիրները, ովքեր ժողովրդի հանդեպ իրենց սիրո անվան տակ քողարկված հրահրում են անփորձ մարդկանց: Ցանկանում եմ, որ երիտասարդությունն իր ազնիվ պայքարում այդպիսիների զոհը չդառնա:

Զրույցը վարեց
ՋՈՒԼԻԵՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ
(Մեր հատուկ թղթ.)

Քիշնև